ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/43

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի 12.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.10.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից 29.09.2017թ. հայտարարվել է ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16 ծածկագրով «Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայությունների» ձեռքբերման գնման ընթացակարգ:

«ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն սահմանված կարգով հայտ է ներկայացրել գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնին: Հայտերի բացումը տեղի է ունեցել 09.10.2017թ.: Համաձայն 09.10.2017թ. գնահատող հանձնաժողովի կողմից բացման նիստի N 2 արձանագրության 6-րդ կետի 1-ին ենթակետի՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ է շնորհվել «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ն, այնինչ նրա

ներկայացրած փաստաթղթերում առկա են հրավերով նախատեսված պահանջներին անհամապատասխանություններ և թերություններ, մասնավորապես՝

1. վճարման պահանջագիր (մասնակցության հայտի ապահովում) փաստաթղթում մասնակիցը գրել է ամսաթիվ:

2. վճարման պահանջագիր (մասնակցության հայտի ապահովում) փաստաթղթի 12-րդ տողում ըստ լրացման կարգի պետք է գումարը գրվի թվերով և բառերով, այնինչ թվերով գումարը բացակայում է:

3. տուժանքի մասին համաձայնագիր (հայտի ապահովում) փաստաթուղթը ստորագրվել է 08.10.2017թ., այնինչ փաստաթղթի կազմման ամսաթիվ նշված է 09.10.2017թ.:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

Չեղյալ համարել նշված հանձնաժողովի 09 հոկտեմբերի 2017թ. N 2 արձանագրությունը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Սեդա Դանիելյանը:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.10.2017թ. թիվ 46986-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը ենթակա է մերժման, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն բողոքը ներկայացվում է անգործության ժամանակահատվածում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի դիմումում ներկայացված փաստերը ոչ էական են և չեն կարող հանգեցնել մրցույթի արդյունքների փոփոխման, իսկ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության

կարիքների համար «ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16» ծածկագրով մրցույթի բոլոր փաստաթղթերը հրապարակված են www.armeps.am և www.procurement.am ինտերնետային կայքերում:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության լիազորված ներկայացուցիչներ Համլետ Բատիկյանը և Ալվինա Գրիգորյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի 12.10.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3, 16.08.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի (ճշգրտված) թիվ 2.1 արձանագրությունները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը «Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն և «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ն:

Հանձնաժողովի 09.10.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի 1-ին ենթակետով «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

«ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ին 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու Հանձնաժողովի որոշումը ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, քանի որ վերջինիս ներկայացրած

փաստաթղթերում առկա են հրավերով նախատեսված պահանջներին անհամապատասխանություններ և թերություններ, մասնավորապես՝

1. վճարման պահանջագիր (մասնակցության հայտի ապահովում) փաստաթղթում մասնակիցը նշել է ամսաթիվ:

2. վճարման պահանջագիր (մասնակցության հայտի ապահովում) փաստաթղթի 12-րդ տողում ըստ լրացման կարգի գումարը գրվում է թվերով և տառերով, այնինչ թվերով գումարը բացակայել է:

3. տուժանքի մասին համաձայնագիր (հայտի ապահովում) փաստաթուղթը ստորագրվել է 08.10.2017թ., այնինչ փաստաթղթի կազզման ամսաթիվ նշվել է 09.10.2017թ.:

Բողոքի քննության նպատակով 16.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ վճարման պահանջագիր փաստաթղթում մասնակցի կողմից նշվել է փաստաթղթի լրացման ամսաթիվը, իսկ նույն փաստաթղթի 12-րդ տողում գումարը նշվել է միայն բառերով, սակայն նշեց, որ Պատվիրատուն վճարման պահանջագրում փաստաթղթի լրացման ամսաթիվը մասնակցի կողմից նշելը դիտել է ոչ էական շեղում, իսկ նույն փաստաթղթի 12-րդ տողում գումարը միայն բառերով լրացնելը Պատվիրատուի կողմից գնահատվել է Հրավերի պահանջներին համապատասխանող, քանի որ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ հիմք է ընդունվում տառերով գրվածը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ տուժանքի մասին համաձայնագիրը ստորագրվել է 08.10.2017 թ., այնինչ նշված փաստաթղթի կազզման ամսաթիվ նշվել է 09.10.2017թ., ապա հայտնում եմ, որ փաստաթղթի գնահատման ժամանակ փաստաթղթի արտատպված տարբերակում ստորագրման ամսաթիվը չի երևում, և այն ճշտելու համար պետք է իրականացվեր էլեկտրոնային փաստաթղթի լրացուցիչ ստուգում, ինչը Պատվիրատուի կողմից չի կատարվել:

Հրավերի N 9 հավելված հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրին (մասնակցության հայտի ապահովում) կից ներկայացվող վճարման պահանջագրի ծանոթությամբ սահմանվել է, որ վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն նույն Հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի:

Նշված կարգի համաձայն՝

• վճարման պահանջագրի 2-րդ տողով սահմանված՝ «ներկայացման ամսաթիվը» վավերապայմանի առկայությունը պարտադիր է, ընդ որում, այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին պահանջագրի ներկայացման օրը:

• վճարման պահանջագրի 12-րդ տողով սահմանված՝ «գումարը (թվերով և բառերով)» վավերապայմանի առկայությունը պարտադիր է:

«Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրում «ներկայացման ամսաթիվը» վավերապայմանում մասնակցի կողմից նշվել է «09 հոկտեմբերի 2017թ.» ամսաթիվը, իսկ 12-րդ տողում «գումարը՝ թվերով և բառերով» վավերապայմանում նշվել է միայն գումարը բառերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 04.05.2011 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են Հրավերի հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրում մասնակիցը նշել է ամսաթիվ, իսկ նույն փաստաթղթի 12-րդ տողում վերջինիս կողմից գումարը նշվել է միայն տառերով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ բողոքաբերի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ մասնակցի կողմից տուժանքի մասին համաձայնագիրն ստորագրվել է 08.10.2017թ.:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի դիրքորոշումն այն մասին, որ վճարման պահանջագրի 12-րդ տողում գումարը միայն բառերով լրացնելը Պատվիրատուի կողմից գնահատվել է Հրավերի պահանջներին համապատասխանող, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ հիմք է ընդունվում տառերով գրվածը, հիմնազուրկ է, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը, մինչդեռ տվյալ դեպքում ոչ թե առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև, այլ թվերով գումարը ընդհանրապես չի գրվել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը և վերջինիս 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների լրացման կարգով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից ներկայացված այն պնդմանը, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է մերժման, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բողոքը ներկայացվում է անգործության ժամանակահատվածում, անհիմն է, քանի որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է պայմանագիր կնքելու մասին որոշումը բողոքարկելու ժամանակահատվածը, այլ ոչ թե բողոքն առհասարակ ներկայացնելու ժամանակահատվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի 12.10.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Դադարեցնել «ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-2-17/16» ծածկագրով գնանշման հարցման Հանձնաժողովի 09.10.2017թ. նիստի N 2 արձանագրությունը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ